ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2014 թվականի N 123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (68-3.1-15) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի,**ո ր ո շ ու մ եմ.**

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 68-3.1-15) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

Ավետիսյան Արմեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ
Բարսեղյան Կարեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ
Ոսկանյան Աննա	Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի.կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Դավթյան Սաքո	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
Օհանյան Աիդա	Գյուղատնտեսական համալսարանի Կապանի մասնաճյուղի դասախոս
Մարտիրոսյան Էդգար	ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի դասախոս

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Կարեն Բարսեղյանին, մրցութային հանձնաժողովի քարտուղար՝ Արմեն Ավետիսյանին:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. հուլիսի 30
ք. Կապան